ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. հոկտեմբերի 4-ից 7-ը Մոլդովայի Հանրապետություն (ք. Քիշնև) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝

Լևոն Խալիկյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Մոլդովայի Հանրապետություն (ք. Քիշնև)

04.10.2017-07.10.2017թ.

4. Հրավիրող կողմը՝

Մոլդովայի Հանրապետության Էկոնոմիկայի և ենթակառուցվածքների նախարարության սպառողների իրավունքների պաշտպանության գործակալություն

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցել Մոլդովայի Հանրապետության Քիշնև քաղաքում կայանալիք ԱՊՀ մասնակից-երկրների Սպառողների իրավունքների պաշտպանության խորհրդատվական խորհրդի 13-րդ նիստին:

6. Քննարկված թեմաները՝

ԱՊՀ մասնակից-երկրների Սպառողների իրավունքների պաշտպանության մակարդակի բարձրացում, փոխգործակցության մեխանիզմների քննարկում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գործուղման շրջանակներում քննարկվել են մի շարք հարցեր.

- ԱՊՀ մասնակից-երկրների Սպառողների իրավունքների պաշտպանության խորհրդատվական խորհրդի 12-րդ նիստի որոշումների կատարողականների քննարկում,
- Նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ԱՊՀ մասնակից-երկրներում սպառողների իրավունքների պաշտպանության հետ կապված առավել կարևոր իրադարձությունների և դրանց ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում,

- ԱՊՀ մասնակից-երկրների Սպառողների իրավունքների պաշտպանության խորհրդատվական խորհրդի և Եվրոպական տնտեսական հանձնաժողովի միջև հուշագրի ստորագրման քննարկում,
- Զեկույցով հանդես է եկել Լևոն Խալիկյանը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման արդյունքում որոշվել է ԱՊՀ մասնակից-երկրների Սպառողների իրավունքների պաշտպանության խորհրդատվական խորհրդի հերթական նիստն անցկացնել Հայաստանի Հանրապետությունում՝ 2018 թվականի մայիս-հունիս ամիսների ընթացքում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկվել է.

- Լ.Խալիկյանի կողմից առաջարկվել է Խորհրդի հերթական նիստը անցակացնել Հայաստանի Հանրապետությունում:

10. Գործուղվողը՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Լևոն Խալիկյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը՝

10.10.2017թ.